Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի N 1 հիմնական դպրոց»ՊՈԱԿ–ի ՀԵՊ-ի (6 դասաժամ), երաժշտության (6 դասաժամ) և կերպարվեստի (2 դասաժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը, եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- Դիմում (Ձեւ 1),
-մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
- Հայաստանի Հանրապետություն կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում): (17-րդ կետը փոփ., լրաց. 11.10.2023 N128-Ն):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են 2024թ.-ի հունվարի 10-ից մինչև հունվարի 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից 15-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024թ-ի հունվարի 29-ին՝ ժամը 14^{00}-ին**, Ստեփանավանի N1 հիմնական դպրոցում: Հասցեն՝ Ք.Ստեփանավան, Մ.Բաղրամյան 67:

Տեղեկությունների համար զանգահարել (0256) 2-25-72 հեռախոսահամարով: